ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«23» 10 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000085

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Գոռ Հարությունյան***
Ք. Երևան, Միքայելյան 3-րդ շ. 95 բն.

Գործունեությունը՝ ***Տաթև համայնքում ճոպանուղու (զիպլայնի) կառուցման և զբոսաշրջային կենտրոնի կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000085

«23» 10 2019թ.

Տաթև համայնքում ճոպանուղու (զիպլայնի) կառուցման և զբոսաշրջային կենտրոնի_կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Գոռ Հարությունյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Տաթև համայնք

Սյունիքի մարզի Տաթև համայնքն ունի զբոսաշրջության մեծ պաշար: Հաշվի առնելով համայնքի հեռանկարային զարգացման ուղղությունները և վերջին տարիներին այցելուների ակտիվությունը՝ դեպի Տաթևի վանական համալիր և գործող ճոպանուղի, նախատեսվում է իրականացնել «ճոպանուղու (զիպլայնի) կառուցման և զբոսաշրջային կենտրոնի կազմակերպման» սույն ծրագիրը: Գործունեության նպատակն է՝ ապահովել համայնքներում տուրիստների մեծ հոսք և տարբեր միջոցներով զբաղվածություն (զվարճանքի կենտրոններ, էքստրեմալ տուրիզմ, սննդի օբյեկտներ և այլն):

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տաթև համայնքի վարչական սահմանում, Հալիձոր-Տաթև ճանապարհի հարևանությամբ գտնվող՝ «Սատանի կամուրջ» բնական կամրջի հարակից ձորակում («Սատանի կամուրջ» բնության հուշարձանից մոտ 360մ հեռավորության վրա, «Սատանի կամուրջ» բնական հուշարձանի պահպանման գոտին ընդգրկում է 100մ շառավղով շրջակա տարածքը): Զբոսաշրջային կենտրոնը կազմակերպվելու է գոյություն ունեցող՝ 465.0 մետր երկարությամբ գրունտային ճանապարհին հարող տարածքում՝ անտառային հողերում («Սյունիքի անտառտնտեսություն մասնաճյուղ»), զբաղեցնելու է 5400մ մակերես: Հողերի օգտագործումն իրականացվելու է անտառային հողերի վարձակալության պայմանագրի համաձայն (պայմանագիրը կնքված է Գոռ Մայիսի Հարությունյանի հետ՝ 26.10.2019թ.):

Տարածքը ներկայացված է նոսր թփուտային բուսականությամբ, ծառային բուսականությունը բացակայում է: Այն բնութագրվում է որոշակի թեքությամբ, աշխատանքներն իրականացվելու են պահպանելով բնական լանդշաֆտը:

Նախատեսվող զիպլայնն իրենից կներկայացնի առաջինը՝ մոտ 350մ, իսկ երկրորդը՝ 200մ երկարություններով ձգվող երկկողմ ճոպանուղիներ, որոնք սկսվելու և ամփոփվելու են լանդշաֆտի հետ համադրված երկու առանձին հարթակներով: Թռիչքի նախապատրաստման և զբոսաշրջիկներին ցուցադրելու համար նախատեսված է կառուցել նաև փոքրիկ «Զիպլայնի»-ի մոդել, որը կունենա մոտ 30մ երկարություն և 2մ բարձրություն, որտեղ ցանկացողները նախնական թռիչք կկատարեն:

Տարածքում նախատեսվում է տեղադրել 5 ժամանակավոր շարժական փայտե զրուցարաններ, որոնք կծառայեն սպասելու և հանգստի համար: Հենասյուները տեղադրվելու են կետային հիմքով գետնին ամրացված մետաղական խողովակների մեջ:

Այցելուների սպասարկման համար նախատեսվում է տեղադրել նաև փայտե շարժական ֆիննական տաղավար: Տաղավարը 2 կողմից ամրացված կլինի գետնին երկաթե խողովակներով, իսկ մյուս 2 ծայրը կհենվի գետնին՝ տարածքի թեքության հաշվին: Երկաթե խողովակները կամրացվեն կետային հիմքով՝ դրանք մխրճելով գետնի մեջ: Տնակը կոմունալ հարմարություններով բաղկացած կլինի երկու՝ իրար կից սրահներից, որոնցից մեկը նախատեսված կլինի զգեստավորման համար /կհագնեն թռիչքի համար նախատեսված հանդերձանքը/, իսկ մյուսում ներառված կլինի՝ դրամարկղ, աշխատակիցների սենյակ, սանհանգույց, իրերի պահեստ և բուժ կետ: Տնակի կողքին, այցելուների հանգիստը պատշաճ կազմակերպելու համար կնախատեսվեն՝ ջրի, հանքային ջրերի և հյութի սառնարաններ:

Զիպլայնից օգտվողները կգնեն տոմսերը և կանցնեն ֆիննական տնակ՝ զգեստավորվելու և նախնական թռիչք կատարելու: Զիպլայնը կունենա 2 թռիչքի և 2 վայրէջքի հարթակներ /2.5մ x 2.5մ չափերով/: Ճոպաններն ամրացվելու են լրացուցիչ՝ 1.5 մx 1.5մ չափերով հենարանների վրա ամրացված մետաղական կոնստրուկցիաներով: Թռիչքի երկու հարթակները տեղադրվելու են 2.5մ և 6.0մ բարձրությամբ 4 մետաղական խողովակներով հավաքված ֆերմաներից աշտարակների վրա, որոնց ոտքերը գետնին ամրացվելու են բետոնե հիմքերով: Հարթակներն ունենալու են գետնից քիչ բարձր տեղադրված մետաղական հենարանների վրա հավաքված փայտե տախտակամած: Բարձր աշտարակի վրա բարձրանալու համար նախատեսվում է 15մ երկարությամբ, փայտե տախտակամածով կախովի ճոպանային կամրջակ: Ճոպանների հաստությունը 12մմ է, իսկ տախտակի հաստությունը 7սմ, լայնությունը՝ 80սմ: Տնակից մինչև զիպլայնի հարթակ մոտ 200 մ զբոսաշրջիկները կանցնեն ոտքով և դա էլ կլինի յուրօրինակ արշավ:

Զրուցարանները և շարժական տաղավարը միմյանց կապող արահետները, ինչպես նաև հարթակները նախատեսվում են բարեկարգել անկանոն բնական քարե շարվածքով՝ համատեղելով սիզամարգի հետ: Գլխավոր ճանապարհից մինչև սպասարկող գլխամասին մոտեցող ճանապարհը ևս բարեկարգվելու է: Ավտոմեքենաների կայանման համար օգտագործվելու է գոյություն ունեցող գրունտային ճանապարհի հարակից տարածքը:

Գլխավոր հատակագծով նախատեսված կառույցների տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝ տեղադրվող տարրերի ընդհանուր մակերես՝ 305.1մ^2, հենասյուների հենասյուների և հարթակների մակերես՝ 44.5մ^2, ավտոկայանատեղի՝ 140.0մ^2, տաղավարներ՝ 120.6մ^2, կոյուղու հոր՝ 30 մ^3:

Զիպլայնի կազմակերպման աշխատանքները կիրականացվեն 40 օրվա ընթացքում: Հողային աշխատանքների ընթացքում որպես տեխնիկական միջոցներ կօգտագործվեն 1-ական՝ էկսկավատոր, բուլդոզեր և բեռնատար մեքենա: Հողային աշխատանքների ծավալը ընդհանուր կկազմի 82.5մ^3, որից հետլիցքի ծավալը կկազմի 32.0մ^3: Հողային զանգվածից կառաջանա 3,71մ^3 բուսահող, որը պահեստավորվելու է պաշտպանված վայրում՝ հետագայում տարածքների վերականգնման աշխատանքներում օգտագործելու նպատակով: Իսկ մնացորդային գրունտի քանակն օգտագործվելու է մոտեցնող ճանապարհի բարեկարգման նպատակով:

Այցելուների համար տարածքում նախատեսվում է նաև առանձին սանհանգույցներ (երկու կետ), ավտոկայանատեղի, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման սեպտիկ հոր /քանի որ տարածքում բացակայում է կոյուղին/: Հողը փորելու միջոցով տնակից և սանհանգույցից խողովակներ կանցկացվեն դեպի սեպտիկ հոր: Սեպտիկ հորը ամիսներին կարգով, պարբերաբար կենթարկվի մաքրման՝ բացառելու նպատակով շրջակա միջավայրի աղտոտումը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հողային զանգվածների փորման, հանման, տեղափոխման աշխատանքներից և շինարարական տեխնիկայի շահագործման

արդյունքում կառաջանան փոշու, ծխագազերի արտանետումներ, աղմուկ, որոնք կլինեն կարճատև և կկրեն ժամանակավոր բնույթ:

Հողային շերտի հնարավոր աղտոտվածություն կարող է առաջանալ շինարարության ընթացքում վառելիքի արտահոսքերից, որի կանխարգելման համար նախատեսվել է վառելիքի տարաները պահել յատուկ մետաղական տակդիրների վրա:

Գործունեության իրականացման արդյունքում ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ գործունեության ենթակա տարածքը Որոտան գետից գտնվում է 350մ հեռավորության վրա: Տեղանքի ջրային հոսքերը լրացուցիչ աղտոտումից զերծ պահելու և ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նպատակով հայտում նախատեսվել է՝

- շինարարական հարթակների ջրցանն իրականացնել այնպես, որ չառաջանան ջրային հոսքեր,
- շինարարական և տրանսպորտային միջոցների լվացումը և սպասարկումն իրականացնել շինհրապարակից դուրս,
- կենցաղային կեղտաջրերն ուղղել սեպտիկ հոր՝ շրջակա տարածքների աղտոտումը կանխարգելելու համար:

Շինարարության ընթացքում փոշու հնարավոր ազդեցությունների նվազեցման միջոցառումները ներառում են՝

- շինանյութերը, ավելցուկային գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժն իրականացնել միայն գոյություն ունեցող ճանապարհներով՝ բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը,
- բացառել շինարարական աղբի և հողերի կուտակումները՝ բուսածածկ տարածքներում,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել:

Հայտում շինարարության ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների կառավարման նպատակով ևս նախատեսվել են միջոցառումներ: Ըստ նախնական գնահատման շինարարության ընթացքում կառաջանա 3-5մ^3 ծավալով շինաղբ, որը նախատեսվում է տեղափոխել Տաթև համայնքի ղեկավարի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է աշխատողների կենցաղային-տնտեսական կարիքների և ջրցանի համար: Հայցվող տարածքի հարևանությամբ անցնում է «Վեոլիա ջուր» ընկերությանը պատկանող ջրագիծը, որով ընկերության հետ կնքվելիք պայմանագրի համաձայն նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային կենտրոնի ջրամատակարարումը: Ջրցանի համար անհրաժեշտ ջրաքանակը նախատեսված է շինարարական հրապարակ բերել ջրցան մեքենաների միջոցով:

Համաձայն կենսաբազմազանության ուսումնասիրության մասնագիտական հետազոտությունների արդյունքների/ դաշտային ուսումնասիրություն, մասնագիտական գրականություն/ դիտարկվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները բացակայում են :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո գործունեության ենթակա տարածքում և հարևանությամբ նախատեսված է իրականացնել բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառում են տարածքի մաքրումը աղբից, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը: Ձիպլայնի շահագործման ժամանակահատվածում տարբեր տեսակի թափոնների համար տարածքում նախատեսված է առանձին աղբամանների տեղադրում /պլաստիկ, ապակի, կենցաղային աղբ և այլն/:

Կանաչապատման նպատակով նախատեսվում է իրականացնել ծառատունկ: Տնկվելու են՝ 20-ական սոճու, եղևնու տանձենու, ծիրանենու, խնձորենու, դեղձենու, սալորենու

տնկիներ, 20 հատ խաղողի վազ, 200 հատ ընկուզենի և 30 հատ դեկորատիվ թփեր: Ընկուզենիները նախատեսվում է տնկել տարածքի շուրջ՝ նպատակ ունենալով ստեղծել ընկուզենու անտառ: Տարածքում նախատեսվում է ստեղծել նաև գազոններ և ցանել միամյա, դեկորատիվ ծաղկավոր բույսեր: Կանաչապատ տարածքների խնամքով զբաղվելու է այգեպանը, ով կլինի Տաթև համայնքի բնակիչ:

Նախագծի իրականացման ընթացքում բնապահպանական միջոցառումների ծախսերը ըստ նախնական գնահատման կազմում են 920 հազար դրամ, որի մեջ մտնում են՝ շինարարության ընթացքում փոշենստեցման ծախսերը /120.0 հազար դրամ/ և հարթակների բարեկարգման, հարթեցման և կանաչապատման ծախսերը /800.0 հազար դրամ/:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում Ճոպանուղու (զիպլայնի) կառուցման և զբոսաշրջային կենտրոնի կազմակերպման հետ կապված հանրային քննարկումներ են անցկացվել Տաթև համայնքում, որոնց ընթացքում նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները հայտում հաշվի են առնվել:

Պատճառաբանական եզրահանգումներ: Անտառային հողերում նախատեսվող գործունեության հայտը մշակվել է ոլորտը կարգավորող իրավական ակտերին /Անտառային օրենսգրքի 41-րդ Հոդված, ՀՀ կառավարության՝ 30.08.2007 թվականի N 1045-Ն որոշում/, ինչպես նաև անտառօգտագործման պայմանագրի պայմաններին համապատասխան: Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր բացասական ազդեցություններ կդիտվեն միայն շինարարության ընթացքում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն կարճատև: Հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Ծրագրի իրականացումը կարող է խթանել տուրիզմի, ինչպես նաև հարակից բնակավայրերի տնտեսական զարգացումը՝ ստեղծելով աշխատատեղեր: Ծրագրով նախատեսված կանաչապատումը տարածքի համար կունենա էկոլոգիական նշանակություն՝ անտառային հատվածի մեծացման տեսանկյունից:

Փորձաքննական պահանջներ

1.Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ Անտառային օրենսգրքի 41-րդ Հոդված և ՀՀ կառավարության՝ 30.08.2007 թվականի N 1045-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև անտառօգտագործման պայմանագրի պայմաններին համապատասխան:

2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոռ Հարությունյանի կողմից Տաթև համայնքում ճոպանուղու (զիպլայնի) կառուցման և զբոսաշրջային կենտրոնի կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ Հ. Մկրտչյան